

U 20



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Ե. Բ. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

36^{րդ} ՏԱՐԻ

ՀԱՅԱԹ 18 ԱՊՐԻԼ 1887

10.11 3869

ԵՐԵՎԱՆԻ ԻՐԱՎԵՐ ԿՐ իրատարակ-
ուի ի Կ. Պոլիս, ամեն շաբաթ օր, եւ
ծեռքէ կը ծախուի 40 ՓԱՐԱՅԻ: Բաժա-
նորդագրուածեան պայմանք են՝ Կ. Պոլսոյ
համար տարեկան կէս եւ վեցամսեայ՝
քառորդ Օսմ. ոսկի. գաւառաց համար
70 դրշ. եւ օտար երկրաց համար 15 Ֆը-
րանք: Բաժանորդագները ղրկելու է առ-
մատակարարուածիւն Սրեւելքի եւ Մա-
սիսի, Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորատուճնկ-
եան խան:

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ա. Սզգայլն
(Եկեղեցիէն Բարեկարգս-
նէն)
Յ.ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ Արեւոտք ի գաւառս
ԵՒԱՅԼՆ Հայրենասէրի մը պատ-
րանքը
Դ. Հ. Թիֆլիզէն Նամակ
Քաղաքական
ՊԼԱՏՈՆ ԶՈՒԲՕՎ Ղարաբաղի աստղագէտը
Օրագիր

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՈՒՐԲԱԹ 17 ԱՊՐԵԼ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ

Այս տարին մեծ պահոց մէջ քահանայ ձեռնադրելու առթիւ խնդիր մը ծագեցաւ եկեղեցականաց մէջ: Ներքին՝ է ո՛ր եւ է պատճառաւ մեծ պահ-քին վարագոյր բանալ բաց ի որոշեալ օրերէ: Եպիսկոպոսներէ ոմանք իրենց գործովն իսկ հաստատական պատասխան տուին. Մանկունի Վահրամ եպիսկոպոս, դարձեալ իւր գործովը, ժխտական պատասխան տուաւ. Կրօնական ժողովը կարող չեղաւ ո՛չ հաստատական եւ ո՛չ ժխտական պատասխան մը տայ եւ խնդիրը մնաց առկա:

Մեզ համար՝ կարեւորն այն չէ՝ դիտ-
նալ թէ ո՞վ ունէր իրաւունք, այլ ցա-
ւալի կէտն այն է որ Հայոց եկեղեցւոյ
աւանդութեանց մասին հայ եպիսկո-
պոսք տարբեր տարբեր կարծիքներ ու-
նին։ Այդ անհամաձայնութիւնը շատ
ինդրոց մէջ եւս ի յայտ կուգայ։ Ե-
կեղեցի մը որ տասն եւ հինգ դար շա-
րունակ անկախ կերպով իւր բարե-
կարգութիւնը պահպանած է, այդ ե-
կեղեցին պէտք է ունենայ իւր դարա-
ւոր աւանդութիւններն զօրս անգիտա-

նալ ներելի չէ ո՛չ մէկ եկեղեցականի։
Ինչպէս եկեղեցւոյ հիմնական վարդա-
պետութեանց, նոյնպէս ծէսերու հա-
մար կրկին աւանդութիւններ չենք
կրնար ունենալ։ Մէկ դաւանանք, մէկ
օրէնք։ Ուրեմն մեզ համար բաւական
տարօրինակ երեւոյ՞ մ'է եպիսկոպո-
սաց անհամաձայն իրեն ի մօտին
այնպիսի խնդրոց որքարդէն վճռուած
պէտք է համարուին դարերէ ի վեր։

Սակայն այս երեւոյթն որքան որ
ըօրինակ թուի, բայց եւ այնպէս մեզ
զարմանք պետք չէ պատճառէն իւրտե-
լով թէ ինչ վիճակի մէջ կը գտնուին
մեր եկեղեցականք: Անոնցմէ մի մասն
եկեղեցական օրինաց տգէտ է, եւ տը-
գէտներէն կարելի չէ պահանջել որ
ճշդիւ գործադրեն ինչ որ չեն գիտեր:
Եւ այդ բաւ չէ, տգէտները կը մար-
տնչին գիտուններուն դէմ այնպիսի
յանդգնութեամբ մը որ տգէտներու
միայն յատուկ է:

Մաս մը եկեղեցականք ալ եկեղեց-
ւոյ օրինաց ծխական ավանդութեանց
քաջ հմուտ լինելով հանդերձ կատա-
րելապէս անհոգ են : Կը թոյլատրեն
ամէն զեղծում՝ «Ի՞նչ կ'ըլլայ» ըսելով :
Գլխաւոր զեղծումները կը կատարուին
ի Կ. Պոլիս, ուր եկեղեցւոյ ծխական
ավանդութիւնները կը բախտին Պոլ-
սեցւոց դիւրութիւններ մատուցանե-
լու համար : Փոխանակ Պոլսեցիք եկե-
ղեցւոյ հպատակելու, եկեղեցին կը հը-
պատակի Պոլսեցւոց :

Շատ երկար կը լինի մի առ մի թը-
ւել թէ ո՛րքան աւանդութիւնք , ո՛ր-
քան եկեղեցւոյ կարգ ու կանոններ կը
խանգարուին հետզհետէ : Հանգուց-
եալ Կաթողիկոսն իւր կոնդակներովը
կը պատուիրէր անխախտ պահել ամէն
աւանդութիւն, կարգ ու կանոն : Այդ
կոնդակներուն ոչ ոք կ'ուզէր ուշա-
դրութիւն դարձնել : Պատճառը Վասն
զի՛ թուլցած են, տկարացած են եկե-
ղեցական բարեկարգութեան , եկեղե-
ցական նուիրապետութեան կապերն :
Ամէն կառավարութիւն նուիրապետու-
թեան վրայ հիմնուած է , եկեղեցական
կառավարութիւն մը , աշխարհական
իշխանութենէ մը աւելի կարօտ է այդ
նուիրապետութեան : Բայց մեր եկե-
ղեցւոյ մէջ կը մոռնանք այս տարրա-
կան ճշմարտութիւնն : Հայաստանեայց
եկեղեցին ազատ եկեղեցի է ըսելով ,
տիրացուն տէրութիւն , տէրութիւն վար-
դապետին , վարդապետն եպիսկոպոսին,
եպիսկոպոսը Կաթողիկոսին ինքզինքն

Հաւասար ճանաչելու արտօնութիւնը խլած է։ Ոչ ոք ո'չ ումեք հնազանդելու ինքզինքը պարտական կը ճանաչէ։ Եւ առանց հնազանդութեան եկեղեցի չկրնար լինիլ։ Երբ մի ո' եւ է վարդապետ կարող կը լինի ազատօրէն ըմբոստանալ Կաթողիկոսի դէմ։ ամբողջ եկեղեցականութեան դէմ, առանց ո' եւ է պատժոյ ենթարկուելու, ի՞նչպէս կարելի է որ այդ եկեղեցին կարենայ բարոյական ոյժ մը պահել։

Վտանգն հետզհետէ կը մեծնայ, եւ այդ վտանգը նշմարելու համար շատ խորաթափանց աչք մը պէտք է: Ո՛րչափ ժամանակը կը յառաջանայ, այնքան աւելի կը դժուարանայ վտանգին դարմանը: Երբ Յարութիւն Պատրիարք Պոլիս եկաւ, ամէն ոք կը կարծէր թէ՛ Ն. Սրբազնութիւնը պիտի նուիրէ նաեւ իւր հոգածութիւնն եկեղեցական բարեկարգութեանց խնդրոյն: Բայց Սըրբազանը միայն հոլաթափներու մասին ըրաւ մի տնօրինութիւն, եւ այլ եւ ոչինչ: Չենք գիտեր թէ՛ այդ տնօրինութիւնն իսկ յարգուեցա՞ւ: Յարութիւն Սրբազան, որ խառակրօն եկեղեցական մո՛է, ոչ թէ փափագ չունէր այդ բարեկարգութիւնները կատարելու, այլ ինքզինքը բաւական զօրաւոր չլղաց մարտնչելու ամէն զեղծմանց դէմ:

Եւ ի՞նչպէս կրնար մարտնչիլ քանի որ գիտէր թէ պէտք եղած աջակցութիւնը պիտի չկարենար գտնել եկեղեցական դատէն։ Մեր եկեղեցականք չեն կրնար միանալ եւ միասիրտ, միահոգի աշխատիլ եկեղեցւոյն եւ աղգին շահուց պաշտպանութեան, վասն զի եկեղեցականք միմեանց դէմ ատելութեան ոգի կը սնուցանեն։ Կարելի չէ գտնել երեք չորս վարդապետ, եպիսկոպոս, քահանայ որ զերար յարգեն եւ սիրեն։ Անձնական ատելութեամբ տողորուած անձինք չեն կարող հանդարտ մտքով, անխռով սրտիւ կրօնից եւ եկեղեցւոյ նուիրել իրենց սիրտն ու միտքն։

Ի՞նչ կը լինի այս անտարբերութեան,
այս քայքայման վերջը: Մեր եկեղեցին
պիտի նմանի մի տան՝ որոյ տանտէրն
անհող է, երբ մի կ'ըմբնար կը կոտորէ:
— Ի՞նչ կ'ըլլայ, տան հիմերն: Հաստա-
տուն են, կ'ըսէ: — Ապակի մը կը կոտորի,
դարձեալ ի՞նչ կ'ըլլայ կ'ըսէ: — Կամաց
կամաց դուռ մը ներսէն կը կոտորի, կը-
տոր մը դրսէն կը բռդի: տան տէրն
անհողութիւնը կը շարունակէ եւ օր
մը տունն անքնակելի կը լինի, թէպէտ
եւ հիմունքն հաստատուն լինին: Ի՞նչ
օգուտ հիմն երբ վրան չենք չբարձ-
րանար:

U. U.

ԱՐՀԵՍՏՔ Ի ԳԱՒԱՌՍ

Քաղաքիս մէջ եւ ի Մէլիքէ բրուտի արհեստով կան 8-9 հայեր, Արաբկիրէն եկած, որք հաստատուած լինելով չուկայէ հեռու տուններու մէջ, կը շինեն հասարակ կաւերով կարգ մը տեղւոյն յարմարած խեցեղէններ որպիսիք են, քիւնայ կաւա, խաւարայէ կէճ, ճաղ սափորներ, գիւղացւոյ ի պէտս՝ հողէ կանխէններ, որոնցմէ ոմանք թուրք կը գնեն, կանթեղ եւ կճիճ եւս կ'ապրիկեն (vernir) կանաչ գոյնով միւս կան Նիփրատի եզերքներէն կը փոխադրեն, որ 4 ժամու հեռու է քաղաքէն:

Բրուտներ կը շինեն զայնս պարզ դործի մը վրայ, զոր ոտքի փութով ի շարժման կը գնեն առանցքին վրայ, ձեռքով եւս վերայ խոփին ձեւ կուտան, կը փայտկեն(1):

Այս կաւամաններ գործ կ'ստանան քաղաքի մէջ եւ ուրեք ուրեք ի գիւղորէս, ուր գիւղացի կինն ալ կրնայ բրուտ մ'ըսուիլ: Գիւղացին տներու մէջ եղած քուրի սափոր եւ պտուկ, Ապաֆհերցի քուրդ կանանց ձեռքի գործերն են առհասարակ, որ կը բնակին մեր հարաւակողման գաւառակներուն՝ Այվոսի եւ Շիրոյի մէջտեղերը(2): Սափորն՝ որ ունի մեծութիւն երկու լիտր քուր պարունակելու, կը ծախեն պտուկին հետ 40ական փարայ գնով: Քուրդ կանանց ձեռագործեր՝ կ'ըլլան բաւական ճաշակաւոր, թեթեւ եւ կոշտ թրծուն, որ զանգակի մը պէս կը զօղեն. սա է լաւագէս թրծւած կուժին նշանը, գոյնով կարմիր. կը խորհիս թէ խմորը տորոնով բաղադրութիւն մ'եղած լինի: Գիւղացին տուն մը կը գտնուին 4-5 կուժ, այսչափ պտուկ, տարուան մէջ անոնցմէ 2-3ը կը կտորի անպատճառ կամ հարսին ձեռքն եւ կամ կուժուն ու իշուն ոտքերուն տակ: Կուժի եւ պտուկի պէս կահերէ զատ՝ գիւղացի կինը կրնայ շինել կոշտ ձեւով կաւաներ, կէճներ, լեւներ, քիւնայ (ցորենի ալիւրի շտեմարան) քաւ (թոնրի կախարիչ), մերթ եւս կերակրոյ պնակներ, լուացուելու եւ ալիւր խմորելու քաւեր: Պղնձեղէններն այսպէս՝ քիչ գործածութիւն ունին մանաւանդ գիւղ տեղերն, ուր խոշոր կաթսան, տաշտ եւ կերակրոյ ամանները կը տեսնուին նշանակեալ մետաղէն: Այս տեղ յախճապակիի գործածութիւնը կ'երեւի ընդհանրապէս ամեն տուններու մէջ, որ արդարեւ յարմար ի գործածութիւն եւ աւողջական տեսակէտով մանաւանդ սեղանի ընտիր սպաս մ'է, այլ իրաւ եւս է որ այս ապրանքը թուրքիա մեծուած օտար հիւր մ'է առ մեզ, որուն համար ստուգուած հաշուով թարբերգ իւր 12 ժամ հեռակայ շրջանակներով տարին 800-1000 ոսկւոյ չափ գումար մ'երոտացւոյն պարբերական վճարներ կը կատարէ:

Շրջակայ մեզ՝ կը նշանակենք Բալու, Չիքուշ, Չարսանճագ եւ Երբեմն Մալաթիա:

Տարին հազար ոսկի միայն անոր համար

(1) Փայեկ՝ բրուտին ձեռքի մէկ գործին է, փոքրիկ, յգիւն տախտակ մի ձեռքի մեծութեամբ, որով կուտան խմոր-կաւին՝ փայլ եւ ուղղութիւն ըստ կամս. գիւղացի բառ մ'է այս, զոր սովորած եմ մօրմէս. քաղաքացի բրուտներ փայեկի տեղ կաշիի կը տոր մը կը գործածեն: Փայեկի ուրեմն կը նշանակէ, կաւն յղկել, փայլեցնել, յարգարել են. են. են:

(2) Ապաֆհերցի քուրդներն աղջիկ շին նշաներ երենց գիւղի շրջանակէն զատ ուրիշ տեղեր, որ մի գուցէ ծնողաց կամ հայրենի գիւղին այս արհեստը տանին ուրիշներու ալ սովորեցնեն, որուն համար կ'ըսուի թէ՛ յատուկ երգումի օրեր ունին:

որ ունենանք եւրոպական յախճապակին՝ կ'ոտրուելու ընդունակ ու եթեակայ սպառելու, փշրանքները բանի մ'ալ չի յարմարելու պայմանաւ, տնտեսական կարեւոր խնդիր մ'է, տան մը համար, երկրին ամենէն հարուստին համար ալ:

Կար միջոց մի ուրեմն, որով զուրկ չի մնայինք մէկ կողմէն եւրոպականին բնծայած առաւելութիւններէն, որով եւ մի եւ նոյն ժամանակ զայնպիսիս մեր տանց մէջ գործածելու հարկեցուցիչ պարագան մեղմէինք կամ գոհացման մէջ գնէինք:

Այս հարցմանս պատասխան պիտի ընենք ձեռնարկի մը պատմութիւնն որ գիւղի մը մէջ սկիզբ առած է. ոչ որ տակաւին բան մը ըսած չէ անոր վերաբերմամբ, եւ կ'ըսենք, գործին պարագայները ցարդ եթէ նպատաւօր ուղղութեան մէջ դրուէին, կրնայինք իսկ յախճապակեայ պնակի մը մէջ գրուած կերակուրի համն ունենալ:

Պատուելի Աստուր՝ քարոզիչ Հիւսէյնիկ գիւղի Բող. Ժողովարանին՝ է ազատամիտ մարդ մի, գաղութած հայրենի եկեղեցիէն, այլ սիրտն հոն թռած: Ամերիկեան միսիօնարն հայ բողոքական մը յիշելու ատեն քունքն եթէ քերած է, պատուելի Աստուրն է այդ, որ կ'երեւի միշտ տարակարծիք միսիօնարի գաղափարաց, քարոզիչ եւ բրուտ:

Տարինքէ ի վեր կ'ախտաւոր այս մարդը գիտական ուսումնասիրութեանց օգնութեամբ ձեռքի արուեստն եւրոպականին նմանցնել. մինչեւ 1882 կը գործէր առանձինն տան մէջ, աղուն եւ Գիւրտիտանցի երիտասարդի մը գործակցութեամբ. կը տեսնէ ուր ուրեմն որ՝ փորձ եւ արդիւնք գտած աշխատութեան չեն համապատասխաներ, 82 ին. որոշում կ'ընէ տղան յԱմերիկայ զրկելու, ինք կը մնայ ըստ առաջնոյն փորձերուն հետամուտ ու աշխատող: Անգլ. բէտս՝ Պօսքընի մէջ կը յաջողի մտնել բարեկամաց յանձնարարութեամբ կարմիր ա. նօթ շինող գործարան մը, ուր բացի սպիտակ գոյնէ, ուրիշ ամեն տեսակ գոյներով ապրիկներ ի կիրառութեան լինելով՝ կը մնայ վեց ամսոյ չափ գործարանին տիրոջ եւ վարպետին Մր. Պուլուարտի հովանոյն ներքեւ, կը սովորի պէտք եղածները կաթսաւ արդէն մշակած ընդունակութեան մը շնորհիւ՝ կարճ միջոցի մը մէջ, և Պուլուարտի յանձնարարականաւ կ'երթայ մտնել Մր. Քլարթի(1) գործարանն դարձեալ ի Պօսքըն, որ է Նիւ-Ինկլենտ Փաթթի քեմիքէլ ըսուած գործարանն:

Այն տեղ հայ տղան երկու ամբողջ տարի գործնական վարժողութեան մը մէջ լինելով՝ Քլարթի մարդասիրական առաջնորդութեամբ ձեռք կը բերէ կաղապար շինելու եւ անօթներ ապրիկելու կերպեր, ապա արհեստին ճիւղերուն վրայ քննութիւն տալով, վարպետի եւ Thos-grayի ձեռքէն կ'ընդունի վկայական ու արժաթ նշան մը, որուն վրայ նշանակուած կը լինի Վարպետ հասարակ եկեղեցիէ եւ կրտսիէ:

Հօրն հրահանգներով, քար անօթներու մասին եւս յԱմերիկա եւ Պօսքըն բաւական տեղեկութիւններ քաղած՝ կը գտնայ հայրենիք, յայտ երդուած լինելով Քլարթի թէ արհեստը կատարելապէս սովորել վերջ Ամերիկայի մէջ գործ չպիտի ընէ:

Պ. Անդրէաս կ'ունենայ կաղապար եւ զանազան տեսակ բաղադրութիւններ արհեստին վերաբերող, կ'ունենայ Հիւսէյնիկ գիւղին մէջ հօրն աշխատութեամբ պատ-

րաստուած գործարան եւ պայման տեղացի գրամատերի մը հետ, որմէ պատուելին 200 ոսկիէն աւելի գումար մը փոխ ստակ առնելով՝ գործարանի արտադրած շահուն կէսը գրամատիրոջ հանելու պաշինք կ'ընէ, ցորչափ անոր տուած գրամը մնայ յանձին առանց տոկոսի: 83ին մէջ կ'ունենայ մէկ երկու փոսն կազմաւորութիւնը, կը զիջեն գործարանն հարկ եղած նիւթերն. այս ատեն պիտի բսենք որ, գործողութիւնն առանց խաղի չանցնիր. փութերը ձմրան եղանակին մէջ շինուած ըլլալով ամի յափոյ, անմիջական արդիւնք չեն ցոյց տար, թէ եւ կուզան յերեւան 8-10 տեսակ տարբեր գոյներով ապրիկուած ամաններ: Գրամատերը Նահեկեան Յովակիմ աղա, յանկարծուտ յուսալիրաւման գալով՝ կը բաժնուի ընկերութեան: Անդրէասեանի ծախքը կը յանդի 500 ոսկւոյ մօտ:

Գործադուր միճակն հարկեցուցիչ կը լինի, որ կը շարունակէ մինչեւ ներկայ տարւոյ փետրուարն: Հայր և որդի կը բաւականանան դադարի օրերուն պատրաստ անօթներն ապրիկել ու ծախել: Վերջին փութէ մը արտադրած կը լինին ձուածեւ կախարչով ամաններ, դեղին, կապոյտ եւ սպիտակ(1) գունովը ապրիկեալ, Թուրքիոյ մէջ քիչ տեսնուած կանաչ գոյնով՝ կաթիլ և թէյի ամաններ, գաւաթներ՝ ընտիր կապոյտ եւ յարգադոյն, այս գոյներով փարչէր, թէյ յամաններ, պնակներ, սիկարի պընակիկներ ձուածեւ եւ ծաղկեկար, ծաղկի կապաղոյն թաղարներ եւրոպական ոճով, դեղագործի յոյժ կարծր տեսակէն անկաններ, 30 կտորներով շինուած խնկամաններ: Տեսան զատնը յատուկ այցելութեամբ Փերիգ եւ լիվա փաշաներ, գեղապետ սպայ եւ ուրիշներ որոց շատերը ձեռքէ ձեռք խլեցին ելած ամաններն իբր անխառն: Միսիօնարը եւս ունեցան մաս մը այդ նշանակուածներէն իրենց սեղաններուն վրայ, ի զարդ, յախճապակիէն աւելի սիրուն:

Քիչ մը տնտեսութիւն, քիչ մ'ալ հայրենասիրութիւն եթէ խառնենք բանին մէջ, որ կարող ըլլան լեցնելու Պ. Անդրէասի արհեստին մէջ մոռցած ձեղքուածներն որ որչափ աննշան բայց վերջապէս միշտ ակնայի տակ հանդիպելիք քարերու պէս պիտի ըլլան նոյն իսկ իւր անձին ի վիճաս, քիչ մ'ալ կ'ըսեմ՝ հազար ոսկւոյ տարուէ տարի անհետ վրայ եղող գումարն աչքի առնելու բերենք, յայնժամ Պ. Անդրէասեանի պէս բրուտի մը համար ամեն սրտեքէ քաջալերող խօսքեր պիտի հոսին, որ եւ բաւականին դրական ըլլան եւ գործեն կարեւոր օժանդակներ: Ձենք գիտեր թէ կարեւոր բրուտ արհեստաւորին համար ինչ նիւթեր աւելի պէտք կրնան ըլլալ, բայց գիտենք թէ գաւառի մը մէջ կը բնակինք, որ շրջապատուած է կրանիթ լեռանց գօտիներով, 4-12 ժամ միջոցի մը մէջ կան ընտիր քաւարք, քիւնայէ լեւոս, մաքուր սաւաղ կամ Ալէնոսի խիճ, շինական կաւ եւ, 4-8 ժամ հեռաւորութեամբ յոյժ պիտի տեսակուա առատ քաւ-աքաւ, ոյր անկողին կը տեսնուի լաւատեսակ հրաբույժ մը: Մեր պատուելի բրուտի տղան կրնայ հարկաւ այս պատրաստ գանձերէն օգուտ քաղել եթէ օգնող ձեռքեր ընկեր ունենայ: Օր մը կը լսէինք թէ խեղճ մարդն 100 ոսկւոյ պէտք մ'ունեցեր է նորատեսակ փութերու կազմութեան ի ծախս, եւ չուարեր միացեր է:

(1) Այս ամաններուն մէջ սպիտակ գոյնն անյաջողութեան մը կը մտնէր, Պ. Անդրէասեան ինքն իսկ կրնայ այս անկեղծ խոստովանութիւն ընել, մենք շատերս ալ ամեն բան տեսած ենք գործարանին մէջ:

(1) Մր. Քլարթի Ամերիկայի պահեստի զօրաց զնգապետ է:

Եւ քանի որ օրուան ուշադրաւ խնդիրը կը կարգանք լրագրաց մէջ, օտմ. գաւառներն երեւցած կամ այն տեղերն հնարաւոր եղող արհեստները քաջալերելու կառավարական բարի ու երկրաչէն տրամադրու. մարդութիւնն է, չենք կարծել որ աչքի ծայրով դիտուին այս տողերը. գուրսէ ներմուծեալ ապրանքները կրնան օր մը մեր երկիրը սնամէջ տիկ դարձնել, ուստի եւ տեղական արհեստներու թեւ տանք:

Յ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

17 Մարտ 1887

Քարբերդ

ՀԱՅՐԵՆԱՍԷՐԻ ՄԸ

ՊԱՏՐԱՆՔԸ

Ֆրանսացի մեծանուն հայրենասէր եւ բանաստեղծ Պ. Բօլ Տէսուլէտ հրատարեցաւ Հայրենասէր Դաշնակցութեան նախագահութենէն:

Անոնք որ քիչ շատ ծանօթ են Ֆրանսայի գործերուն, կ'ըմբռնեն անշուշտ այս լրոյն կարեւորութիւնը: Պ. Տէսուլէտ ինք հիմնած էր այդ դաշնակցութիւնն այս նպատակն է Ալգաս-Լուէնի սէրը վառ պահել Ֆրանսայի մէջ եւ վրէժխնդրութեան ոգին արծարծել ու հրահրել: Իւր անձնական գործն ըրած էր այդ Դաշնակցութիւնն եւ այնպէս կը թուէր թէ առ յուսէտ նստ պիտի նուիրէր իւր բոլոր եւանդն ու աշխոյժը: Մտնուած չէ անշուշտ թէ անցեալ տարի Պ. Տէսուլէտ ուղեւորութիւն մ'ընելով Եւրոպայի մէջ, Կ. Պոլիս ալ եկաւ ուր առիթ ունեցաւ պարզելու իւր հայրենասէր տեսութիւններն: Եւ այն պահուն ուր քաղաքական իրաց վերջին տագնապալի կացութեան պատճառաւ կը կարծուէր թէ առաւել եւս հզօրացան պիտի պաշտպանէ իւր եւ իւրայնաց դատը, կը հրաժարի Ընկերութեան նախագահութենէն:

Այս անակնկալ հրաժարման պատճառներուն գալով, ոմանք կ'ըսէին թէ սորա «միակ» շարժառիթն ընտանեկան սուգ մ'էր: Պ. Տէսուլէտ քանի մը շաբաթ առաջ Կորոյս իւր անդրանիկ քոյրն: Այլ կը յաւելուին թէ Գերմանիա ձեռնարկներ ըրեր է արտաքին գործոց նախարարին քով եւ թէ կառավարութիւնն հրամայեր է նմա հրաժարիլ ձգնարութիւնը գիտնալու միակ միջոցն էր իրողութիւնն հասկնալ Պ. Տէսուլէտէ, ուստի եւ Ֆիլաքի խմբագիրներէն մին գնացած է այս մասին տեսակցութիւն մ'ունենալ նորա հետ: «Իմ պատմելիքս, ըսած է Պ. Տէսուլէտ, շատ տխուր է, որովհետեւ պատմութիւնն է այն պատրանաց որը ոյժ եւ կեանք կուտային ինձ եւ որը հետ զհետէ յօգս ցնդեցան: այլոց մեծ սխալներուն եւ փոքր վատութեանց առջեւ: Անշուշտ հասկցած էք թէ քրոջ մահն հրաժարման պատճառներէն մին է: միայն: Բուն ձգնարութիւնն ահաւասիկ. Գերմանիա բան մը խնդրած չէ Պ. Կոպլէտ, չեմ կարծեր: Պ. Կոպլէտ բան մը խնդրած չէ ինձմէ, կը հաւատամ ձեզ. սակայն ի չգոյժ խօսքերու, նախարարապետին գործերն եւ արդի բոլոր պետական անձանց բոլոր գործերն հարկադրեցին զիս հրաժարիլ»:

Եւ Պ. Տէսուլէտ Ֆիլաքի խմբագրին ըրած է հետեւեալ յայտնութիւններն որք մեծ կարեւորութիւն ունին, որովհետեւ չէ միայն իւր, հապա Ֆրանսացոց մեծ մասին գաղափարներն ու իղձերը կը ներկայեն:

«Սիրտս արդարեւ կը մորմոքի տեսածներէս, եւ երկրիս ապագայն շատ մութ կը թուի ինձ»:

Դաշնակցութեան մէջ, ո՛չ մոլեռանդ պատերազմաւորներ ենք, ո՛չ խելայեղ վրէժխնդիրներ պարզապէս եռանդուն ծառայողներ ենք Ֆրանսայի, եւ ո՛չ կրօնքով, ո՛չ ալ քաղաքականութեամբ կ'ընդունենք: Պատրաստութիւն նորա զինուորական զօրութեան, նորոգումն նորա ճարտարական եւ առեւտրական ուժին, աւասիկ, երեք խօսքով մեր գործոյն բոլոր յայտագիրն:

Այն անձնութիւններն մէջ, որով վեց տարիէ ի վեր, սրտաթուց ու քաջամարտիկ, կը ծառայենք մեր դատին, չկայ ո՛չ անհամբերութիւն եւ ո՛չ յախճառն պատուութիւն, այլ միայն հաշիւ, տրամաբանութիւն եւ նախատեսութիւն:

Երբ մեր միջոցները, մեր ազդեցութիւնները, մեր աշխատութիւնն ի մի բերելով, ամեն ինչ ըրինք ծաւալելու համար մարմնավորելու եւ հրացանաձգութեան առնական կրթանաց ճաշակն եւ քաջալերելու անոնց հանդէսներն, նոյն իսկ այս մասին մրցահանդէսներ հաստատելու, մեր միտքն հայրենեաց համար յարձակողներ պատրաստել չէր, հապա միայն պաշտպանողներ:

Ոմանք իսկ զարմանք յայտնեցին թէ ի՞նչպէս բարձրագոյն կը պարտաւէրէր արկածախնդիր պատերազմներն, իբր թէ հայրենասիրաց առաջին հոգը չլինէր խստիւ խընայել Ֆրանսական արիւնն:

Երբ մենք առաջինն եղանք ի վեր հանող աղիտաբեր հետեւանքներն առեւտրական դաշնագրին զոր Պ. Պիլմարք այնքան ճարտարութեամբ մտնուցած էր յաղթութեան դաշնագրին մէջ. երբ Ֆրանսացի ճարտարագիտաց եւ վաճառականաց միաբերանք անդհուրեւեւ խորագրաւ մրցման վրայ եւ անոնց առաջ գրինք տնտեսական նոր Սըտանը զոր կը պատրաստէին մեզ, դարձեալ ոչ թէ յարձակողներն այլ պաշտպանողները կը գրգռէինք:

Երբ, վերջապէս, տխրած եթէ ոչ խռոված պարտեալ երկրին բարոյական վճատութենէն, կ'երթայինք բովանդակ Ֆրանսայի մէջ զարթոնցանել մեծ յիշատակներն պատմութեան մը որ ուրիշ շատ պատմութիւններէ աւելի բեղմնաւոր է փառքով, եւ այսպէս անցելոյն դիտակցութեամբ ապագային համար վատահոթիւն կուտայինք այս քաջարի ժողովրդեան, ի՞նչ կ'ընէինք, ի՞նչ ըրինք, եթէ ոչ Հայրենիքը պաշտպանողական վիճակի մէջ դնել, ազգն անկախութեան եւ հպարտութեան վիճակի մէջ դնելով:

Եւ ինչո՞ւ համար այսպէս կ'ընէինք: Ո՞ւրիշ կուգար մեզ ամենուս այս քրթափայտի եռանդն, այս աշխոյժն, վասն վերականգման հայրենեաց: Զէ թէ կը փութայինք պատերազմ հրատարակել ընդդէմ Գերմանիոյ, հապա կ'ուզէինք որ երբ Գերմանիա պատերազմ հրատարակէ, Ֆրանսա կազմէ պատրաստ լինի: Կը գուշակէինք արդարեւ թէ ուշ կամ կանուխ ժամը պիտի գայ, յորում թէ՛ յազմեցնելու համար իւր ժառանգական ոխն ընդդէմ Ֆրանսացոց զորս չուզէր թողուլ անկախ ապրիլ, եւ թէ՛ խոյս տալու համար Գերմանաց ազատական պահանջումներէն զորս չուզէր ազատ տեսնել, Բրուսիա յանկարծ պիտի արձակէր պատերազմի ազդակն եւ մեր վրայ պիտի թափէր գերմանական զայրութիւնը զեղուն հեղեղը:

Եւ այս ժամն եկած էր վերջապէս Մեր ժողովուրդն ոյժ եւ քաջութիւն ունէր արարար գիմազրուելու վտանգի մը ոյր շարժառիթն ինք չէր եղած:

Եւրոպիոյ մէջ մեր ունեցած կացութեամբ, կրնայինք լուրջ աջակցութիւն մը յուսալ Գերմանիոյ միւս կողմէն: Ռուսիա մեզ հետ էր, Իտալիա կը վարանէր: Ընտրութիւնը նոր ոյժ մը կուտային Հանրապետութեան: Առիթը մեզ համար երբեք աւելի բարեյարմար եղած չէր:

Երկրորդ նախարարապետն երբեք աւելի անպատկառ եղած չէր: Մեր սահմանադրութիւնները կը գրաւէր նոր հրացան մը փորձելու պատրուակաւ, եւ գերմանական մամուլը մեր վրայ կը թափէր իւր բոլոր նախատինքներն: Սպանալեաց եւ թշնամանաց ներքեւ, մեր երկարամտայ խոհեմութիւնն եւ համբերութիւնն ակն յայտնի ապացուցած էին Եւրոպիոյ թէ՛ ո՛ր կողմն էր զընդունումն, ո՛ր կողմն էր արդարութիւնը: Լաւ ուրեմն, Ֆրանսական կառավարութիւնը ծուր գրաւ, ամեն ինչ ընդունեց, ամեն ինչ կուլ տուաւ, զգուշանալով ոչինչ պատրաստելէ՝ դիտողութեանց տեղի չտալու համար, չհամարձակելով զօրքերը տեղափոխել, եւ այսպէս մեզ ենթարկելով արշաւանաց ամենէն սոսկալին:

Եւ երբ իրենց կը խօսէին կորուսեալ նահանգներուն վրայ, երբ Ֆրանսացի նախարարաց կը յիշեցնէին թէ Ֆրանսական ազգին պատիւն իսկ կը պահանջէր երեսի վրայ չթողուլ եւ ոչ մին, չհրաժարիլ ոչ մէկ իրաւունքէ: Երբ կ'ըսէին իրենց թէ դրաւեալներն արդէն չորս անգամ իրենց բուէով ապացուցած էին թէ ի՞նչ էին եւ ի՞նչ կ'ուզէին, թէ արդէն չորս անգամ կատաղաբար դըրդած էին իրենց շղթայներն, աշուրնին առնելով բանտապահից զայրոյթն եւ իրենց ձեռաց ճմուլին, այն ատեն Ֆրանսական նախարարութեան անգամ պարոնայք կը պատասխանէին: «Ոչ մէկ բան է կը հրաժարինք, սակայն պատրաստ չենք, պէտք է սպասել: Տեսէք Բրուսիան, վաթսուս տարիէն լուծեց Իէնայի վրէժը»:

Եւ այն ատեն հառաչանք կը յիշէր Պ. Ֆէրրի, զնա որուն դէմ մարտնչեցայ իւր գաղթային աղիտաբեր աշխարհապարտութեան համար, որ սակայն կառավարական մարդ մ'էր եւ որ պիտի գիտնար ապահով վրիժառութեան միակ առիթն օգուտ քաղել:

Պէտք է սպասել: Եւ այս պաշտօնական պատասխանն էր և պիտի մնայ միշտ մի եւ նոյնը:

Երբ Ալգասցի մը կամ Լուէնցի մը կուգայ յիշեցնել, արտասուածոր աչօք, թէ ծանր բան է տասն եւ վեց տարի լուծի տակ լինել, «Համբերութիւն, բարեկամ, կը պատասխանեն նմա, չէք ուզեր անշուշտ նշանակեալ ժամանակն առաջ անցնիլ. Բրուսիա վաթսուս տարիէն լուծեց Իէնայի վրէժը»:

Երբ զինուորը կը զայրանայ իւր զօրանոցին մէջ կամ հրապարակին սալայատակին վրայ ուժգին կը հեշեցնէ իւր դատարկ հրացանին բունը, դարձեալ առաջ կը քշեն Բրուսիացոց վաթսուս տարիները՝ զայն հանդարտեցնելու համար:

Լաւ ուրեմն, եւ կ'ըսեմ թէ այս անպատուութիւն մ'է, անուանարկութիւն մ'է, հայրենեաց դէմ ոճիր մ'է:

Նախ եւ առաջ Բրուսիա վաթսուս տարի չսպասեց իւր լուծէն ազատելու համար, հապա միայն ճիշդ ու ճիշդ ութ տարի. 1806ին, Իէնայի մէջ Հոնէնլոնէն եւ Աուէրսդատի մէջ Պիլլըրի փախուստին եւ 1813ին նոցա յաղթանակաւ Բարիլ մտնելուն միջև ճիշդ ութ տարի կայ: Եւ ոչ միայն ութ տարուան մէջ վերստին տիրացաւ կորուսած:

երկրներուն, հապա զբաւեց ուրիշ երկիրներ։ Սաքսոնիոյ կէսն հանդերձ Պիլզ մարքով որ նոս ծնած էր անդ, Սարաբուրկ եւ Սարլուի, Դոնզվ, Գոլոնիա, Գոպլէնձ, Էքս-լա-Շարէլ եւ բոլոր շուէտական Բոմերանիան։ Իէնայի պարտեալներն այսպէս վաստակեցան 2400 բառակուսի միոն տեղ եւ երեք միլիոն բնակիչք որք իրենց վրէժը լուծած էին փառաւորապէս։

Եւ մենք, պարտեալքս, մենք որ տասն եւ եօթն տարիէ ի վեր պարտինք պատերաստել վրիժառութիւնն, եթէ տակաւին երեք չորս տարի ալ չպահանջենք այդ փոխարինութիւնն, ամեն ինչ կորսուած է։

Արդարեւ, քսան տարուան մէջ, նոր սերունդ մի կը հասնի գինուց ներքեւ, սերունդ որ ճանչցած չէ ո՛չ պատերազմին տխրութիւններն, ո՛չ պարտութեան ուժովն, որ երբէք տեսած չէ զՍիլվաս Փրանսական հող եւ որ ա՛լ մաքէն չպիտի անցունէ ետ պահանջել զայն։

Եւ Ալլաա իսկ ի՞նչ պիտի լինի այս երկար տարիներէն յետոյ։ Վերադարձին ինչպէս պիտի ընդունի զեւզ, եթէ երբէք վերադառնայ։ Հոն եւս մեր գիւնաց պիտի գտնենք լեռներու նոր սերունդ մը։ Ինչ իրաւունքով ետ պիտի առնենք զանոնք։ Վերստին մեզ գտած առեւտրին ի՞նչ իրական պարտականութիւն պիտի ունենան մեզ նկատմամբ։

Ար տեսնէք թէ այս քսան տարիներէն յետոյ, ալ պատեանէն չպիտի կրնայ ելնել Ֆրանսայի սուրն որ ժանգոտած պիտի լինի անգործութենէ, եթէ անոգ ուտ կերպիւ չջախճախուի ուրիշ ընդհարումներէ։ Եւ այս իսկ է կառավարութեան զաղանի փափաքն։

Եւ ինչո՞ւ համար կ'ուզէք որ կեանքս մաշենեմ այս անօգուտ Բրոքսիանային մէջ, քանի որ Կառավարութենէն ո՛չ սը կ'ուզէ բարձրացնել ազգին ոգին, զինել երիտասարդութիւնը, պատրաստել մարտը, փընտել եւ գտնել յաղթութիւնը։ Կ'ընեն թէ ոճրագործութիւն մը կ'ընենք ո՛չ թէ բըռունցքնիս վեր առնով, այլ ջանալով գըլուխիս վեր բարձրացնել։ Փանի մը անկարողներ ու քանի մը վախկոտներ հայելին կը լինին ամենէն վեհանձն եւ ամենէն քաջարի ազգին։ Թմրեցուցիչ դեղ կուտան իրարուն այս անկեղծ եւ ուղղամիտ ժողովրդեան իբր կազդուրիչ, եւ կէս-բունի մէջ կ'ընկղմեն զայն։

Այդ մարդիկը չեն նշմարեր թէ, վրէժ-խնդրութենէն սոսկալով, ամբողջովին կ'անպատուեն հայրենիքն եւ Հանրապետութիւնը։

Եւ այս կառավարիչներուն վիճակը շատ զարմանալի է։

Որովհետեւ ամենքն ալ պատերազմէն կ'երկնչին։ Եթէ յաղթուին, կը վախնան հակահանրապետական Սեպտեմբերի 29րդ մը։ Եթէ յաղթեն, կը վախնան Պուլանժէ զօրավարէն որ Մազասի բանտը պիտի դրկէ զիրենք։ Կառավարութիւնը կ'իզգայ թէ հարկ եղած ոյժը չունի օրինաւորութեան մէջ պահելու համար զօրավարն երբ անտէ վերադառնայ յաղթական։ Եւ լաւագոյն կը համարի, Հանրապետութեան պահպանման համար, Ալլաաը թողուլ Գերմանացուն։

Եւ սակայն քաղաքային պատերազմէ չպիտի իյնան, այլ ընդհանուր նողկանքէն։ Գալով ինձ, հանրապետական ի վաղուց հետէ, սակայն սրտնեղիչ հանրապետական, սակայն վշտացած այս վատոգիներու հանրապետութեան գործերէն, ըսի ինքնին թէ բոլոր ջանքերս ալ բաւ էին, թէ իմ գերս

վերջացած էր, որովհետեւ վրէժխնդրութեան ըզճացեալ ժամն երբէք չպիտի հնչէր։

Քրոջս մահն յանկարծ եկաւ աչքիս առաջ զնեւ իրաց ճշմարիտ կողմը, քոյրս որ թեւերուս մէջ մեռաւ եւ զոր երեք տարիէ ի վեր տեսած չէի, զբաղած լինելով պուրի բոլոր Ֆրանսան, խրախուսել բարեկամներս, ցունց տալ քաղաքիներուն, հրահրել յուսացողները։ Լաւ հայրենասէր էի, այնպէս չէ՞։ Այսուհետեւ լաւագոյն կը համարեմ լինիլ լաւ եղբայր եւ լաւ օրդի։

Հայրենասիրաց Գաղնակցութիւնը բան մը չպիտի կորսնցնէ իմ բացակայութենէն։ Բարեկամս Պ. Սանդէօֆ, յարատեւ ու արիւսիրտ Ալլաաի մը, յետ այսօրիկ կը վարէ զայն։ Ինչպէս կը տեսնենք, Գաղնակցութիւնը լաւագոյն ձեռաց մէջ, եւ իմ մեկնելովս բան մը չիօխուի։ Սէնը դարձեալ մի եւ նոյն հանդարտութեամբ պիտի հոսի պատուհանիս տակէն, Գուռասի կղզին զարձեալ կանաչագեղ պիտի մնայ, եւ Պ. Կոպլէ պիտի ազատի այս սրտնեղիչ հանրապետականէն, որ հայրենիքն Հանրապետութենէն վեր կը բռնէ։

Սակայն միշտ յակամայս պիտի յիշեմ Մուհամմէտի սա խօսքն. «Երբ ժողովուրդ մը վատ է եւ չուզեր կռուիլ, Աստուած կը պատմէ զայն եւ ուրիշ ժողովուրդ մը կը դնէ անոր տեղ»։

ԵԻԱՅԼՆ

ԹՂԹԱՅՈՒԹԻՒՆՔ «ՄԱՍԻՍ»Ի

ԹԻՖԼԻՍ, 6^{րդ} ապրիլ

Հայոց լեզուն հալածվում է. Կառավարութեան Անդրկովկասի ներկայացուցիչներն Հայոց լեզուի վրա նայում են իրրեւ մի կատաղի յեղափոխականի վրա, ուստի եւ նրան հալածում են ո՛չ թէ միայն զարոցներից, այլ եւ ուրիշ շատ տեղերից։ Չեղ լաւ յայտնի է արդէն, որ կրօնը ուսուցէին դաս տալու առաջարկութեան զլսաւոր նպատակն է հայերէն լեզուն մեռցնել հայ աշակերտների մէջ. ձեղ արդէն յայտնի պէտք է լինի, որ հայերէն լեզուն որ եւ է նոր լրագիր, ամսագիր հրատարակելն այժմ այլ եւս թոյլ չէ տրվում։ Մի քանի առաջարկութիւններ եղան նոր լրագիր հրատարակելու մասին, բայց կառավարութիւնն ամեն անգամ մերժեց։ Այդ դեռ բաւական չէ. մինչեւ անգամ հրապարակական դատաստութիւն կորցաւ հայերէն լեզուով չի կարելի։ Մի քանի տարի առաջ մեծ պատի ընթացքում լինում էին մի շարք հրապարակական դատաստութիւններ հայերէն լեզուով։ Այս տարի եւս փորձ փորձեցին այսպիսի դատաստութիւններ կարդալու, բայց անյաջող։ սկզբում արգիւնցին Հայոց լրագիրներին խօսել անգամ հայերէն լեզուով հրապարակական դատաստութիւններ անելու խնդրի մասին, եւ յետոյ արդէն մերժեցին այն առաջարկութիւններն որոնք այդ նպատակով եղան։ Դուք գուցէ կը կարծէք, որ գտնվեցան միավիտներ, որոնք ցանկութիւն յայտնած լինէին խօսելու աղբայն-հասարակական խնդիրների մասին. ո՛չ, այդ վաղուց յայտնի է, որ անկարելի է, քանի որ այժմեան զբաղմունքները շատ անգամ աղբայն բառն արգիւնում է գործածել. ամենամեղ նիւթերի մասին իսկ թոյլ չի տուեցին։ Մեր յայտնի դերասան Պ. Աղամեան պատրաստութիւն տեսաւ խօսելու իր

սիրած Շէքսպիրի դրուածքների մասին հրապարակական մի քանի դատաստութիւններ ի հարկէ հայերէն. դատաստութիւնը գրեց, պատրաստուեցաւ, եւ մի դեղեցիկ օր, անկասկած Փրակ հագած, ներկայացաւ Եանօվսկուն (օրից պէտք է թոյլտուութիւն ստանալ) եւ թոյլտուութիւն խնդրեց Շէքսպիրի մասին խօսելու։ Եանօվսկին ի հարկէ մի քանի րոպէ մտածեց եւ համոզուեց որ Շէքսպիրն «ազգային» չէ։ բայց չէ՞ որ «հայերէն» խօսին «ազգային» է։ Եւ ի՞նչ էք կարծում. պատասխանեց, որ չի կարող թոյլատրել, որովհետեւ Աղամեան ուսուցադատակ չէ, այլ թուրքահայտակ է։ Այդ մի բազմաբաժանի պատասխան էր. դա կը նշանակէ թէ «հայերէն» չի կարելի ինչպէս այդ հաստատուեցաւ մի քանի օրից յետոյ։ Մենք յիշում ենք, որ մի քանի տարի առաջ Թիֆլիսում Պ. Մերենց կարդաց հայերէն դատաստութիւն եւ այն էլ «ազգային» նիւթերի մասին. բայց Մերենցն եւս թուրքահայտակ էր. Ժամանակները փոխուել են... Եթէ այսպէս շարունակվի, այն ժամանակ չպէտք է զարմանալ, որ մի օր կարգադրութիւն դուրս գայ, թէ քաղաքի փողոցներում չպէտք է հայերէն խօսալ... Գուցէ կառավարութեան մոլեռանդ ներկայացուցիչները չգիտեն որ, որ իրանք հայերը, մանաւանդ իրան բարձր դաս համարողը, շատ էլ չի սիրում հայերէն խօսալ... Գուցէ կառավարութեան մոլեռանդ ներկայացուցիչները չգիտեն որ, որ իրանք հայերը, մանաւանդ իրան բարձր դաս համարողը, շատ էլ չի սիրում հայերէն խօսալ, այլ ուսուցէն է կատարում։ Խոստովանիք, որ օտարից աւելի մենք ինքներս ենք հալածում մեր լեզուն. ընտանիքների մէջ շատ տեղ հայերէն չեն խօսում. մանուկները չգիտեն մայրենի լեզուն. ծնողք աւելորդ են համարում հայերէն սովորեցնել իրանց զաւակներին. — այսպիսով լեզուն քաղաքավարի կերպով հալածվում է նոյն իսկ հայի ձեռքով. — բայց այդ ոչինչ. ինչ որ մենք Կենդանում այդ ներքին է. իսկ եթէ օտարն հայերէն չիմացող հային ասում է. «ինչ հարկաւոր է հայերէն», այն ժամանակ հայը վերաւարվում է. եւ այդ էլ, իսկապէս ըստ երեւոյթի... Այսքան հալածում են մեր լեզուն. բայց արդեօք մեր ծնողքը փոքր ինչ խղճահարուսեցան. փորձեցին արդեօք ուղղել իրանց սխալը, սովորում եւ սովորեցնում են արդեօք իրանց զաւակներին մայրենի լեզուն։ Այլ արդէն խայտառակութիւն է. դա արդէն բարոյական աններելի ստորնութիւն է մի ժողովուրդի համար, եւ անփոխարինելի ստորնութիւն։ Լրագրութիւնը չի կարող խօսել մայրենի լեզուի նշանակութեան մասին. չի կարելի բարոյել դրա կարեւորութիւնը, փորձովիւ Հայոց զարոցներն անկարող են մայրենի լեզուն մոցնել բոլոր շրջանների մէջ, եւ այդ բոլորից յետոյ, այսքան հալածանք տեսնելուց յետոյ էլ, հայը չի կարողանում վերջապէս սրտով սիրել իր լեզուն, սովորել եւ խօսալ մայրենի լեզուով։ Եւ եթէ մի ժողովուրդ դեռ այդքան զուրկ է գիտակցութիւնից, հասարակ ինքնաճանաչութիւնից, տարրական պատրաստանաչութիւնից, այսպիսի ժողովրդի վրա օտարն իրաւունք ունի համարձակօրէն թելելու, անպատվելու, առանց վախենալու, որ այդ ժողովուրդը կարող է վրէժխնդիր լինել, զիմաս դրել... Եւ օտարն հակադէմ է այդ շատ լաւ կերպով...։

ԼՈՒՐԵՐ

ԷԶՄԻՍԹԵՆՅՈՒՆ. — Վերջին ժամանակները լուրեր են տարածված, որ Հայոց Անօղի պրօկուրօր Տէր-Ստեփանի փոխարէն ու-

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՓՐԱՆՍԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Եւրոպայի մէջ հանրային ուղադրութիւններ վերստին դարձած է Ֆրանսայի եւ Գերմանիոյ վրայ, վերջերս ի Բաների (սահմանադրւած երկուց երկրաց) տեղի ունեցած ձերբակալման մը պատճառաւ:

Բաների կայսրանին Ֆրանսական տեսուչ Պ. Շնէպըլէ մինչ կ'երթար, ապրիլ 20ին, իւր գերման պաշտօնակցին քով որ զինք հրաւիրած էր գալ խորհրդակցել սահմանադրւած վրայ կառավարաց երկու երկրութեան մասին, ձերբակալեցաւ գերման ոստիկաններէ եւ Մէժ տարուեցաւ: Կերեւակայորի անշուշտ քաղաքական իրաց արդի ձգտեալ կացութեան մէջ սոյն օրինակ միջադէպի մը յարուցած սրտայուզութիւնը: Ֆրանսական կառավարութիւնն անմիջապէս լուսաբանութիւն խնդրեց Պերլինէ: Բարիզի գերմանական դործակատարը ծանոյց արտաբերեց դործոց նախարար Պ. Ֆրուէնսի թէ Պ. Շնէպըլէ ամբաստանուած է Ալլաւ-Լոսէնի մէջ քաղաքական մատնութեան դործերու համար: Պորսային գներն ինկան սա պատճառաւ թէ Պ. Շնէպըլէ Ֆրանսական հողին վրայ ձերբակալուած է, թէեւ Գերմանիոյ հակառակը կը պնդէին: Պիզմարը իշխանն հեռագիր մ'ուղղելով Պ. Ֆրուէնսի, ըսաւ որ եթէ Պ. Շնէպըլէ իրօք Ֆրանսական հողին վրայ ձերբակալուած է, միջադէպին օրինաց սխալութիւնը կը պահանջեն նորա անմիջական արձակումը:

Ապրիլ 25 ին, Բարիզի գերմանական դործակատարը ծանոյց Պ. Ֆրուէնսի թէ Բաների միջադէպին վրայ գերման կառավարութեան հրամայած քննութիւնը տակաւին աւարտած չէ: Բողոքեց թէ իւր կառավարութիւնը մտքէն անգամ անցուցած չէ զրգոյնը Ֆրանսա եւ փոխաբայանեց ունենալու Ֆրանսական կառավարութեան ըրած քննութեան տեղեկագիրն, որ յաջորդ օրն յանձնուեցաւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարար կոմս Հէրպէրգ Պիլմարին: Այս տեղեկագիր կը պարունակէ նաեւ գերման տեսչին նամակներուն լուսանկարն, որք կը նստատեսն ծաղակն որուն զոհ դեռաց Պ. Շնէպըլէ: Գերման կառավարութիւնն այժմ զբաղած է բազմաթիւ Փրանսական եւ գերման տեղեկագրերն եւ կը յուսացուի որ քանի մը օրէն պատասխանէ եւ խնդիրը լուսաբանուի:

Այժմ հաստատուած է կերպիւ իւր թէ Պ. Շնէպըլէ գերմանական հողին վրայ ձերբակալուած է: Երբ Ֆրանսական տեսուչը գերմանական հողին վրայ անցաւ, երկու ոստիկանը, որք դարանակալ կ'ապաստէին, անմիջապէս վրան յարձակեցան: Պ. Շնէպըլէ, որ հուժկու անձ մ'է, երկուքն ալ գետին տապալեց եւ ջանաց փախչել զէպ ի Ֆրանսական հողը: Երկուքն հոն չի հասած, ձերբակալուեցաւ եւ կապուելով Մէժ տարուեցաւ: Ֆրանսական լրագիրք սակայն կը պնդեն Պ. Շնէպըլէ փախուստի տեսն Ֆրանսական հողն անցած էր արդէն, ուր եկան բռնեցին զինքը գերման ոստիկանը:

Այս կարեւոր միջադէպին վրայ ո եւ է կարծիք յայտնել տալի, բաւ կը համարինք աստ առաջ բերել Թայֆի խորհրդածութիւնն այս մասին: Փափաքելի է որ որ բացատրութիւնը շուտով լոյս եւ ամբողջ լինի: Եթէ իրողութիւնը տեղի ունե-

ցած են մինչեւ այժմ մեզ հասած տեղեկութեանց համաձայն, որք պէտք է ըսել թէ միմիայն Ֆրանսական աղբիւրէն, միջադէպին քաղաքականութեան կանոնաց բռնաբարումն այնքան մեծ է որ եթէ կուզուի զիւանադրական աղետալի հետեւանաց անաջն առնուլ, պէտք է անմիջապէս արձակել Պ. Շնէպըլէ եւ պարտաւել գերման իշխանութեան ընթացքը: Կը սիրենք հաւատալ թէ քննութեան յետոյ պիտի տեսնուի որ պարզ թիւրիմացութիւն մ'է այս, զիւրաւ դարմանելի նոյն հետայն: միայն թէ խնդիրն հանկուկի չի դառնայ, այն չափազանց խառնաշփոթ հանելուկներէ միայն որք անմեկնելի կը թուին ցորչափ չմեկնուին:

Վերջին պահուն Հալապի մէկ հետագիրը կը ծանուցանէ մեզ թէ Բաների միջադէպին լուծումը լաւ ճամբու մէջ է: Կը հաւատեն թէ Պ. Շնէպըլէ ի մօտոյ պիտի արձակուի:

ԱՆՍՏՐԻԱ - ՀՈՆԳԱՐԻԱ

Աւստրիա 1866 ի սպարութեան վերջ հարկ տեսաւ ամբողջ իւր ներքին ոյժերն, որով միայն կարելի պիտի լինէր փրկել Կայսրութիւնը ներքին քայքայումէ: Հունգարացիք կը պահանջէին իրենց անկախութիւնն եւ զայն գինու զօրութեամբ ստանալու հետամուտ էին երբ Աւստրիա խոհեմութեան համար որոշեց յանգիլ համաձայնութեան մը, առ ոտն կոխելով իւր դարաւոր գոտիութիւնը: Տասը տարուան համար համաձայնութիւն մը գոյացուցին իրենց մէջ Աւստրիա եւ Հունգարիա: Կայսրութեան անունն Աւստրիա-Հունգարիա միտնուեցաւ: Կայսրն ի Պուտտ-Բէշչա պապուեցաւ Ս. Ստեփաննոսի թագաւոր եւ հռչակուեցաւ թագաւոր Հունգարիոյ: Պայմանագիր մը կնքուեցաւ: Ընդհանուր կայսրութեան նախարարութիւնն ի Վիէննա էր, իսկ Հունգարիա առանձին նախարարութիւն մը կ'ունենար իւր ներքին գործոց համար: Կայսրութեան ընդհանուր ծախուց 0/0 30ը կը պատկանէր Հունգարիոյ: Այդ համաձայնութիւնը վերանորոգեցաւ 1877ին վերըտին տասը տարուան համար: Իսկ այս տարի դաւաճեալ կը լրանայ այդ պայմանագրումը, եւ թէ՛ Աւստրիա եւ թէ՛ Հունգարիա կը փափագին վերանորոգել զայն զարձեւ տասը տարուան համար: Բայց մի քանի դժուարութիւններ կան:

Գլխաւոր դժուարութիւնն է Հունգարիոյ կողմանէ ընդհանուր ծախուց մասնակցելու քանակութիւնն: Աւստրիացիք կը պահանջեն որ Հունգարիա վճարէ ընդհանուր ելմուցոյցին 0/0 35, փոխանակ 0/0 30ի, իսկ Հունգարիա 0/0 51.70 էն աւելի չուգեր վճարել: Երկու կողման ներկայացուցիչը կը յամարին իրենց պահանջման վրայ, եւ հարկ պիտի լինի Կայսեր անձնական միջամտութիւնը խնդրոյն կարգադրման համար:

Ուրիշ դժուարութիւն մը կը ծագի հին ազնուազետական կուսակցութեան կողմանէ: Այդ ազնուազետականը կը պնդեն թէ Աւստրիա-Հունգարիա անունը պատմական սխալ մ'է: Հին կայսրութիւնը միայն Աւստրիա կրնայ կոչուիլ, ինչ որ ալ լինին զաշնակցութիւններն ընդ այն ցեղերն ոյք կը կազմեն կայսրութիւնն: Ազնուազետականաց այդ յաւակնութիւնը պաշտօնական կերպարանք մը առաւ վերջին օրերս: Կոմս Լէոն տը Թիրն, նախկին նախարար Հան-

րիշին պէտք է նշանակեն: Տէր-Օսեփով յայտնի է, իբրեւ մի ամենավտանգաւոր եւ վնասակար մարդ Էջմիածնի համար, մանաւանդ որ նա այժմ իր ձեռքի մէջն է առել թէ՛ Մակարին եւ թէ՛ նորա բոլոր շրջապատողներին: Բայց ցաւալին այն է, որ դրա փոխարէն մի փոքր աչքէ մարդ չի նշանակվիլ: Բոլոր տեղեկութիւնները երեւում է, որ եթէ Տէր-Օսեփովին փոխեն եւ որիչ պաշտօն տան, Անտոյի պրոֆուրոր կը նշանակեն: Ֆրանսա-թէ կոչված հայ չինովիկին: Ֆրանսա-թէ միայն անունով հայ է: Նա այժմ Թիֆլիսում գրաքննչի պաշտօն է վարում, եւ մեծ յաջողութեամբ յաջող տոն է վարում: Նա Թիֆլիսում արդէն վճարանգաւոր է: Իսկ Էջմիածնում արդէն մի անանկելի լուծ կը լինի: Ֆրանսա-թէ մի գործիք է, որի միջոցով տեղեկանում են բոլոր գործերի հետ: Իսկ նա, ինչպէս հաստատում են նրան ծանաչողները, շատ ճիշդութեամբ եւ անձնութեամբ կատարում է իր ստոր պաշտօնն, եւ դարմանալի էլ չէ, որ թէեւ երկատարող, բայց այդ պիտի բարձր պաշտօն է ստանում: Ինչ լինում է թող լինի, միայն այս արդէն տարաբաղդութիւն է, որ այսպիսի մարդիկ համարեա բոլորն էլ հայերից են դուրս գալիս:

ԹԻՖԼԻՍԻՑ. — Կառավարութեան կարգադրութեամբ Արտահամ Ամիրխանեան չորս տարուով արքայութեմ է: Ամիրխանեան, կարծեմ Պալիկ հայերին անձանթ չպէտք է լինի: Նա լուսեւորական եկեղեցու ներկայացուցիչ է այստեղ եւ պարագլուխ է կրօնական պրոպագանդայով: Մի ժամանակ Թիֆլիսի Հայոց լրագրութեան մէջ նրա առթիւ մեծ ազդուի դուրս եկաւ:

Ամիրխանեանի արքայութեմ պատճառն հետեւեալն է: Ինչպէս Ռուսաստանի շատ քաղաքներում, այնպէս եւ այս տեղ ուստ հոգեւորականութիւնը կրօնական գրայցներ եւ վիճաբանութիւններ է անում հրապարակով: Այստեղ ամէնքն կարող են իրանց կարծիքն յայտնել: Ամիրխանեան իբրեւ լուսեւորական եկեղեցու ներկայացուցիչ մի քանի անգամ մասնակցում է այդ գրայցներին: Ուսանելը նրան թոյլ են տալիս շատ բան խօսելու, որպէս զի իմանան նրա բոլոր մտքերը: Ամիրխանեան պարզապէս է լուսեւորական եկեղեցին ուղղափառ եկեղեցու գէմ: Եւ հենց այդ պաշտպանութեան համար կախաձէ է ենթարկվում: Կասկածի տակ ընկնելուց յետոյ, ինչպէս սովորական է այստեղ, սկըսում են նրան հետեւել: Ոստիկանութեան միջոցով նրան կանչում եւ բացատրութիւններ են պահանջում: Լուրեր են տարածում, որ նա կամեցել է մի քանի ուղղափառներին լուսեւորական դարձնել: Եւ մասին տեղեկութիւն են տալիս Պետերբուրգ, եւ ահա այնտեղից հրաման է գալիս նրան արքայութեմ: Ամիրխանեանին չորս օր ժամանակ է տրուած իր բոլոր գործերը վերջացնելու, եւ որից յետոյ պիտի արքայութի Ռուսաստանի խորքերը: Նրկու օրից յետոյ անկասկած նա Թիֆլիսում չի լինել: Տեսէք թէ բանը որտեղ է հասել:

ԹԻՖԼԻՍԻՑ. — Այս տեղ մասնաւոր կերպով ուզում են տօնել գերասան Գէորգ Չիլիեանի թատրոնական գործունէութեան քսանհինգ ամեակը: Չիլիեան 25 տարի գործել է յօգուտ Հայոց բեմի եւ արժանի է շնորհակալութեան: Գուք գուցէ զիտեք, որ այստեղ յօգեւան տօնելն էլ շատ դժվար է: Ուղում էին արժանաւոր կերպով տօնել Բաֆֆի եւ Գամառ-Քաթիկայի 25 ամեակները: Բայց կառավարութիւնն արգիլեց:

բային կրթութեան, Ազնուականաց խորհրդարանին մէջ պահանջներ է որ Երկանուն կայսրութիւնը զայնքաւ մի անուան վերածուի, Աւստրիան միշտ Աւստրիա է ըսելով: Նախարարապետ Կոմս Թաաֆֆէ ջերմապէս պաշտպանած է Երկանուն կայսրութիւնն եւ յայտարարած է թէ՛ վերջնական կերպով ընդունուած է կայսրութեան Աւստրիա-Հունգարիա անունն:

Թաաֆֆէ Կոմսի այդ պատասխանը կը գրգռէ Չէխերու զայրոյթը: Չէխերը կը պահանջեն որ իրենք եւս բախտակից լինին Մաճառաց, Ֆրանսիոյ Եղեֆ Կայսրը թագաւոր պատկուի Պոնտիֆի եւ կայսրութեան անունը լինի Աւստրիա-Հունգարիա-Պոնտիֆիա: Մեթրոյով չարութեւն ալ անունն է որ ստիպում կ'ազդէ անխտիր ամէնուն, մանաւանդ Մաճառներուն որք կը նկատեն Չէխերն անարժան իրենց հաւասարեւել: Չէխերը կը պահանջեն օրինակի համար որ Պանքայի տոմսերն որոց վրայ գերմաներէն եւ մաճառերէն գրուած է, կրեն միանգամայն չէխերու լեզուն: Մաճառը անհրձարին է կը պատասխանեն, եւ Պոնտիֆիա սուրբ պատերազմ հրատարակած է ընդդէմ Մաճառաց: Միայն թէ այդ սուրբ պատերազմն առ այժմ կը սահմանափակուի անտեսական շրջանակին մէջ: Հունգարիա կը զրկէ Պոնտիֆիոյ ցորեն, ալիւր եւ մանաւանդ խոզ, ուստից սքանչելի արուստ կը չինեն Պոնտիֆիոյ Ս. յովնէս հայրենասէրը կը գոչեն: Չէխերը զգուշացնելու հունգարական ցորենը, կեցցէ՛ ազգային ցորենն: Անկի Մաճառական խոզն եւ կեցցէ՛ ազգային խոզն ուստից պիտի չինենք ազգային արուստը:

Կարծողներ կան թէ ուր ուրեմն Չէխերն եւս պիտի յաղթանակեն եւ Աւստրիա նոր յաւելում մը եւս պիտի ունենայ իւր անուան վրայ:

Ռ Ո Ւ Ս Ի Ս

Ընդհանուր հանդարտութիւն կը տիրէ ի Ռուսիա: Արտաքին քաղաքականութիւնն ո՛ր եւ է անհանգստութիւն չպատճառեր: արահմուտութիւն կայ խաղաղութեան պահպանման: Պուլկարիոյ խնդիրն թէպէտեւ միշտ դրաւած է ընդհանրութեան ուշադրութիւնը, սակայն մի կարգ խօսք կայ ամէնուրեք «հանգարտ կենանք, չի շարժինք»: Պ. Կիրս աւելի քան երբեք Կայսեր շնորհացն արժանացած է:

Ներքին հանգարտութիւն մ'եւս կը տիրէ: Չառական տոնն ամէն ուրեք սէր եւ խաղաղութիւն կը տարածէ եւ Ռուսը միմեանց կուտան եղբայրական համայնքը: Կայսրը պիտի այցելէ Տոնի քաղաքները, սակայն ամենակատարեալ դադանապահութիւն կը տիրէ ճանապարհորդութեան աւուր եւ գնալիք ճանապարհի մասին:

Սակայն Ռուսաց համար միշտ ներքին դժոյղութեան տոթ մը անհրաժեշտ է: անցադիրներու խնդիրն հայթայթած է այդ տոթ: Բանաւորական օրէնք մը պիտի արգելու այսուհետեւ ուսաներն շարժիլ իրենց տեղէն: 1886 տարւոյն մէջ 870 հազար անձինք անցադիր ստացած են Ռուսիայէն օտար երկիր երթալու համար, նոր օրէնքով բնական է որ այդ ճանապարհորդներու մեծ մասն հարկադրուի այսուհետեւ դուրս չենել երկրէն:

Մինչեւ ցարդ անցադիր մը ստացողը կը վճարէր վեց ամսուան համար միայն 5

րուպլի, որոյ 4½ը կը յանձնուէր Անկար զինուորաց օգնութեան սնուակին: իսկ այժմ հարկ պիտի լինի վճարել 4½ րուպլի մէթալիք՝ բացակայութեան առաջին եռամսի խրաքանչիւր ամսուան համար, 15 րուպլի (սակի) երկրորդ եռամսի իւրաքանչիւր ամսուան համար, 20 րուպլի (սակի) 7, 8, 9րդ ամսոց իւրաքանչիւրին համար եւ 25 րուպլի (մէթալիք) տարւոյն մնացած միւս ամէն մէկ ամսուան համար: Այս հաշուով տարուան մը համար ճանապարհորդը պէտք է վճարէ մօտաւորապէս 40 սակի!

Օրինաց այս ծրագրին դէմ ընդհանուր դանգաժ կայ եւ ամէն ոք կ'սպասէ թէ՛ արդեօք նախարարական այս որոշումը պիտի վաւերացուի՞ Կայսերական Խորհուրդէն:

Ամեն ինչ կախումն ունի այս տուրքը չվճարելու համար ցոյց տրուած բացառիկ պատճառներուն շատութենէն, որք պիտի մեղմեն արդի անօրինութիւնը: Բժշկուելու համար արտասահման գնացող հիւանդներն, ինչպէս եւ ուսանողներն արդէն 1881 թ. օրէնքին տեսն տուրքէ զերծ էին: Կը պատմուի իսկ թէ ուսն բժշկներն հարկ եղած թուղթերն այնքան դիւրութեամբ կուտային իրենց յաճախորդաց, որ Նիգոլա Կայսեր թագաւորութեան տեսն եղաւ տարի մը յորում արտասահման գնացողներէն մէկ ուսն մը միայն տուրք վճարեց եւ վատաւորչութեան պատրուակ չը փնտռեց: Այդ ուսն էր Տըմիտով իշխանն, որ արտահասման իշխմար Չարին բով. «Ի՞նչ ընեմ, պատասխանեց իւր բարեկամաց որք կ'ըսէին թէ ընաւ տեղի չկար միւսներուն ընթացքէն շեղելու, Կայսրը պիտի տեսնէ թէ ամեն ատենէ աւելի բաժնուող եմ: Չեմուզեր որ Ն. Վ. հաստատութիւնը խաբարայ մը համարի գիւս եւ լաւագոյն կը համարիմ ուսն իշխան Տէրութեան տալ եթէ պէտք ունի: Ոչ որ հեռեւեցաւ այդ օրինակին եւ օրէնքն ընդհուպ ջնջուեցաւ: Մեր օրերս Տըմիտով իշխանը հազուադիւրս են: Արդի բաղաքաւորութիւնն իւր հետ կը բերէ ուղեւորութեան պէտքեր, փոխադրութեան պարագրեր, տեղափոխութեան ազատութիւն մը: Բաց աստի կան նաեւ առեւտրական պէտքեր: Ինչ որ ալ ըսեն ու ինչ որ ալ ըսեն անցադիրը վրայ դրուած անհաղին տուրքն այնքան անօրոգիքական պիտի լինի միշտ որքան դժուարաւ գործադրելի: Կը խօսուի նաեւ երկրորդ տուրքի մը վրայ որ պիտի գրուի Ռուսիա եկող ամեն օտարականի վրայ: Այդ միջոցն ալ չպիտի բալեցնէ առեւտուրն եւ ուսքը նախարարք աւելի լաւ կը կ'ընեն ուրիշ միջոցներ փնտռել բարեօրեւ համար երկրին երկտական կացութիւնը:

Ա Ձ Դ

ԲԻԻՉՈՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆՆ որ ի Ղալաթիա Սեղբոս Խան, թիւ 5 եւ Պուլսոյ կողմ Զ. Կ. ԹՈՐՈՍԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ, որ ի Պահ-ճէ-քարու (Մաքսին կարգը թիւ 46) պատիւ ունի ծանուցանել արգոյ հասարակութեան թէ այս օրէն սկսեալ պատրաստ են երրորդական այլ եւ այլ լեզուներէ պատմական, մատենադրական, աշխարհագրական, մաթեմատիքական, բժշկական, եւ մանկավարժական ամեն տեսակ գրեանք եւ ամսաթերթ, ինչպէս աշխարհացոյց տախտակներ եւ ուրիշ գաղտնական կարգ մը պիտոյք բերել տալ լաւագոյն գնելով, մեծ թէ փոքր քանակութեամբ:

Թէ մայրաքաղաքիս եւ թէ քաւառաց մէջ գտնուող գրողներէն ինչպէս եւ ամեն կարգի անհատներէ յանձնարարութիւնը կ'ընդունուին եւ կը կատարուի ճշգրտութեամբ եւ յոյժ գոհացուցիչ պայմաններով:

Աւելի մանրամասն տեղեկութեանց համար դիմել երեքշաբթի եւ շաբաթ օրերը միայն Բիւզանդեան գրատուն որ ի Ղալաթիա Սեղբոս Խան թիւ 5, եւ ամեն օր Զ. Կ. Թորոսեանի գրատունը որ ի Պուլսոյ Մաքսին կարգը թիւ 46:

ՂԱՐԱԲԱՂԻ

(6)

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ԺԱ.

ԱՍՏՂԱԳԷՏԸ ԱՌԱՆՁՆԱՅԱԾ
ՍԱԼԻՉՈՅԻ ՀԵՏ

Երբ հեռացան ամէնքն, աստղագէտն սկսեց նախ հետազոտել սենեակի բլրոր անկիւնները, կասկածելով որ կարող են լրտեսել ճորա խօսակցութիւններն, յետոյ մօտեցաւ հիւանդի անկողնին եւ գլուխը խոնարհեցնելով ցած ձայնով ըսաւ.

—Դուք, խանութ, անզոյ՞ գտնուեցաք... Այժմ պէտք է ուշադիր լինիք. ինչ որ ես ըսեմ կամ հարցնեմ դուք պէտք է ինձ հետ համաձայնիք: Ձեր ամուսինը, Ջուլիանայի այստեղ է, շատ մօտիկ, եւ կը սիրէ զձեզ:

—Այո տե՛ղ է, այո տե՛ղ ի սէր Ալիի...

Աստղագէտը նշանացի հասկացոյց որ լսէ իսկ ինք նստաւ փոքր ինչ հեռու, դուրս վրայ. սկսեց զանազան հարցումներ ընել թէ քանի՞ տարեկան է, եւայն, Բուրը ընկելով աստիճանաբար հասաւ մինչեւ տիկնոջ՝ տասն եւ վեց տարեկան հասակն եւ հարցուց:

—Այդ հասակին մէջ դուք չըջապատուած էք եղբր ամենաշար աստղերէ՛ պէտք է որ այդ ժամանակ ձեզ պատահած լինի մի նշանաւոր դէպք:

—Այո՛, այո՛, բացառանչեց Սալիհան. ես այդ ժամանակ շափաղանց երջանիկ էի...

—Երջանիկ, խանութ, անկարելի է...

—Ի՞նչպէս չէ:

—Ի հարկէ չէ: Միայն ձեզ այնպէս կ'երեւի ինչ որ կը վայելիք այդ ժամանակ, կը տանէր զձեզ դէպի անբախտութիւն: Պէտք է աշխատիք զայդ մօտանալ:

—Մոռանա՛լ Միթէ այդ կարելի՞ է... պատասխանեց Սալիհան խորին վրդովմունքով:

Բայց աստղագէտը խորհրդաւոր կերպով անխորկեց նմա, նա հասկցաւ եւ փոխեց խօսքը:

—Մոռանա՛լ... միթէ դուք կը կարծէք որ այդ լա՛ւ կը լինի...

—Այո կը փրկէ զձեզ, խանութ, կը փառաւ ձեր հիւանդութիւնն եւ երջանիկ կ'ընէ զձեզ: Յստակ կերպով կը տեսնեմ այն բարի աստղերէն որք այժմ կը շրջապատեն զձեզ: Ջուան իրցիներու հրամանատարի աստղը կը գտնուի իւր կատարեալ ծագման մէջ:

—Իսկ իմ գաւառիկները...

—Հանգստացէ՛ք, խանութ, ձեր գաւառիկներն առողջ են եւ բախտաւոր: Բայց նոքա կը լինին աւելի բախտաւոր, երբ որ դուք կ'առողջանաք եւ այգու կ'ուրախացընէք խանն որ երջանիկ պիտի ընէ ձեր գաւառիկներն: Իսկ հիմա դառնանք դէպի ձեր հիւանդութիւնը: Դուք կ'իղգաք աստիկ ջերմութիւն, այնպէս չէ՞:

—Խիստ սաստիկ:

—Լա՛ւ, երբեմն ձեր գլխուն մէջ կը մտնեն մթին մտածութիւններ, եւ դուք բոլորովն անձնատուր կը լինիք այդ մթին մտածութիւններուն:

—Այո՛, ես կը տխրիմ, կը տանջուիմ, կը մեռնիմ օրաօր ցաւերէն...

—Ձեր սրտի ցաւն հետեւանք է ձեր մտաւանջութիւններու, ուրիշ ոչինչ: Ըսէ՛ք արդեօք կրնա՞ք ինքզինքնիդ բաւական ու-

Ժողովը որ կարողանաք ձերով պարտադիր
Այդ հարցման միջոցին, աստղագետն
աչքերովը նշան տուաւ հիւանդին :

—Այո, կ'զգամ բաւական ոյժ :

—Ետտ լաւ, ձեզ հարկաւոր է թարմ
օդ, խանութ : Մեկնեցէք դէպ ինձ ձեր
ձեռքն :

Հիւանդը մեկնեց իւր ձեռքը դէպ ի
բժիշկին, եւ նա ցոյց տալով իրր թէ կը շո-
շափէ նորա երակն, ըսաւ. «Ինձ մօտիկ ը-
րէք եւ դուք կ'աղագոտուիք »

Յետոյ նստաւ սենեակին մէջ տեղը,
գրողանէն դուրս հանեց Գլխաւոր-հաշիւն եւ
եղեգնեայ գրիչն, սկսաւ աստղաբաշխա-
կան հաշիւներ ընել : Սալիհան հետաքրք-
րութեամբ կը նայէր նորա դէմքի ծիծա-
ղելի ծամածուծ իւններուն վրայ : Աստղա-
գետն յատուկ ծանրութեամբ մը ինքնիրեն
կը խօսէր :

—Ետտ գեղեցիկ . . . Զննեմք աստղը կը
մօտենայ : Այդ ինչ փայլուն աստղ է, հա՛,
դա խանի աստղն է . . . Դրան երջանիկ է
նա . . . Ինչ փառք կը շրջապատէ զնա . . .
նա այնքան պայծառ կը փայլի որ անկա-
րելի է նորա վրայ նայիլ . . . Խանութը
կատարեալապէս կ'առողջանայ, եթէ խոյս
չտայ այդ աստղի ազդեցութենէ . . .
Ահա մի խորասանի աստղ կը վազէ հորի-
զոնին վրայ . . . նա կը վազէ բռնելու խա-
նութիւն աստղն . . . ահա՛ նորա գարնունեցան
միմեանց . . . խանութի աստղն հրճուանքի
մէջ է . . . եւ . . .

—Կարելի՞ է վերջապէս ներս մտնել,
հարցուց Փանահ խանն որ դուրսէն ծա-
ծուկ կերպով ականջ կը դնէր նոցա ամբողջ
խօսակցութեան :

Աստղագետը վեր ցատկեց գորգին վրա-
յէն ըսելով .

—Հրամայեք, խան, միայն աջ ոտքով
մտէք, եւ ներս մտնելէ յետոյ երեք ան-
գամ թեքեցէք դէպ ի ձախ կողմը :

Մահաւատ խանը կատարեց նորա պատ-
ուէրներն եւ ներս մտաւ հարցնելով .

—Հիմա, ըսէ՛, յոյս ունի՞ս առողջացը-
նելու :

—Մեծ յոյս ունիմ, պատասխանեց աստ-
ղագետը. խանութի հիւանդութիւնը բոլոր-
ովին կ'անցնի մի շաբթուան մէջ, թէ՛ դուք,
խան, չնորհ ընէք կատարել իմ տուած
խորհուրդներս :

—Ըսէ՛ք, ի՞նչ խորհուրդներ են :

—Նախ երեք օր շարունակ, արեւ-
ուս ծագելէն առաջ, խանութը պէտք
է լսմէ մէկ մէկ բաժակ ջուր այն առուա-
կէն՝ որ կը հոսի դէպ ի աջ կողմն :

—Այդ դիւրին բան է : Ետտ անկեցէք . . .

—Վեց օր շարունակ նա պէտք է ձիով
երթայ այն լեռան վրայ որ կը գտնուի աջ
կողմն : Այդ զրօսանքը կատարելու համար,
նա պէտք է նստած լինի ձեր ամենալաւ
եւ արագընթաց նժոյգներու մէկուն վրայ :
Ճանապարհ իյնալու ժամանակը պէտք է
որոշուի ամէն օր արեգակի առաջին ծաւա-
ղայթը ծագելու րոպէին : Նոր օր խանու-
մը կը հասնի այն տեղ, լեռան վրայ պէտք
է ձիէն իջնայ եւ երեսը դարձնելով դէպ ի
Մէքէթի կողմը պէտք է անդիւր կարգայ մի
բանի գլուխ աղօթքներ : Յետոյ կրկին պի-
տի նստի ձիւս վրայ եւ տուն վերադառ-
նայ : Խանութը պէտք է ծածկուած լինի
չորայի մէջ եւ դէմքը բոլորակաւ լա-
շակով : Այդ զրօսանքները կատարելու ժա-
մանակ ոչ ոք պիտի ուղեկցի նա :

—Ինչպէս թէ ոչ ոք, գոչեց խանը տը-
հաճութեամբ. երեւի, դու ցնորբներու մէջ
կը գտնուիս, աստղագետ :

—Կ'երգեմ ձեր մօտեցումն խան, որ ես
ճշմարտութեամբ կը խօսիմ : Ամէն մի էրիկ մարդ
որ ուղեկցի նորա, պատճառ կը լինի նորա
կորստեան : Իմ յիշած ամբողջ վեց օ-
րերու ընթացքին մէջ խանութի աստղը
պիտի փայլի ամենապայծառ կերպով. բայց
երբ նորա մօտենայ էրիկ մարդու մը աստղն,
այդ ժամանակ խանութի աստղը իսկոյն կը
նսեմանայ :

—Իսկ ներքինինե՞ր :

—Այդ մարդիկ նորա հիւանդութիւնը
բոլորովին անբուժելի կ'ընեն :

—Բայց դու խեղդեցե՞ր ես, աստղա-
գետ, ըսաւ խանը փոքր ինչ բարկացած :
Ի՞նչպէս կարելի է թոյլ տալ կնոջ միայնակ
զրօսանք կատարել այդքան հեռաւոր, տա-
րածութեան վրայ : Այդ անկարելի է, այդ
մեր սովորութիւններուն հակառակ է :

—Ամենակարող խան, ես յայտնեցի ձեզ
ինչ որ ցոյց տուաւ ինձ իմ խորին գիտու-
թիւնս երկնային լուսատուներու մասին,
եւ որոնք կանխապէս կը սահմանեն մարդ-
կային ճակատագիրն : Իսկ դուք չէք ուզեր
լսել ինձ, այդ ձեր կամքն է :

Փանահ խան մնաց շուրջաւոր գրութեան
մէջ. չէր գիտեր ինչ վճռել : Մէկ կողմանէ
կատարած ամբողջութիւնը, միւս կողմանէ սնա-
հաւատութիւնը կը մարտնչէին նորա սրտին
մէջ : Աստղագետը նկատելով նորա մտա-
տանջութիւնն ըսաւ .

—Թոյլ տուէք, ամենազօր խան, ձեր
ստորակին ըսել որ ես չունիմ մի պատճառ
զձեզ խաբելու : Ինձ յայտնի է ձեր ամե-
նակարողութիւնն, որով կարող էք պատ-
ժել խաբեւոյն : Ինձ յայտնի է նաեւ ձեր
առատաձեռնութիւնը դէպ ի այն մարդիկն
որոնք կը կատարեն ձեր ցանկութիւններն
եւ որոնք կ'արդարացնեն ձեր յոյսերը : Ես
կը մնամ այս տեղ մինչեւ այն ժամանակ
երբ խանութը կատարեալապէս կ'առողջանայ :
Եւ այն ժամանակ դուք կը տեսնէք, խան,
որ ես օրպիսի՛ ընծայներու պիտի արժա-
նանամ ինձ իշխողներու ամենամեծէն,
Ջուանչիբիբներու խանէն՝ որոյ դէմքը թող
յաւիտեան փայլի փառաց եւ վեհութեան
պայծառութեամբ :

Փանահ խան կատարեալապէս հրապու-
րեցաւ աստղագետի խորամանկ ճառէն :
Ջնա աւելի գրուեց գիտնականի անկեղծ
ուրախութիւնն որ կ'արտայայտուէր նորա
դէմքի վրայ, երբ կը խօսէր իւր ստանալիք
ապագայ ընծայներու մասին :

—Ես համաձայն եմ, ըսաւ նա, վաղն
առաւօտէն կ'սկսինք Սալիհան բժշկելու
կարգադրութեանց :

Յետոյ մօտեցաւ հիւանդին, բայց նա
կամենալով խոյս տալ անտանելի բռնակալի
ներկայութենէն, ինքզինքը ձեւացուց իւր
թէ կը ընտանայ : Խանը վերստին կտնչել
տուաւ իւր կնիկներն եւ ներքիններն ի-
րենց տեղն եւ ինքն հեռացաւ աստղագե-
տին հետ :

Օ Ր Ա Գ Ի Ր

Պոլիս ունի այժմ պատուական հիւր մը
որոյ նմանը տեսնելու բազմաթիւութիւնը
խիստ քիչ անգամ կ'ուսնենանք : Սիւրի
Գայիանէ Մատակեանն է այդ հիւրն : Այն-
տիկինն որ Նրեւանի 85ի դէպքերու պատ-
ճառաւ Օտէսա կը գտնուէր իւր ամուս-
նոյն հետ, գժրազդութիւն ունեցաւ անց-
եալ տարի կորուսանել իւր ամուսինը, տա-
րաբաղդիկ Հայկ Մատակեանը :

Ազադեաց տիկինը Պոլիս եկած է իւր
մանկիկովն եւ աստ պիտի անցնէ մի քանի
ամիսներ : Այդ յուսանք թէ իւր ներկայու-
թիւնն օգտակար պիտի լինի մեծապէս ազ-
գային կրթութեան :

Տիկին Մատակեան լաւ կրթութիւն ըս-
տացած է. ուսերէն, ֆրանսերէն եւ մա-
նաւանդ գերմաներէն լեզուաց բազմաւատ
է : Օտէսայէն մեզ կը գրեն թէ՛ տեղւոյն
թէ՛ ազգայինը եւ թէ՛ օտարազգիք, մա-
նաւանդ համալսարանի քրօնագիտութեան
մեծապէս կը յարգէին զնա :

1884 թուականին տիկին Մատակեան
տակաւին ամուսնացած չէր եւ անձնուիրա-
բար կը դասախօսէր երեւանի ազնկանց
վարժարաններու մէջ իւր մասնաւոր հո-
գածութեան առարկայ ըրած էր Մանկական
պարտեզը : Մեզ համար փափազելի է որ
Այն. տիկինը մի փորձ ընէր այդպիսի պար-
տեզ մը ի Կ. Պոլիս հաստատուելու :

Այն. տիկին Մատակեան է ըսյր Պ. Աբ-
գար Յովհաննիսեանցի, Արքեպիսկոպոս
գրին :

—Այս շաբթու Ազգ. Ժողովը վերստին
չդուսարեցաւ : Ետտ ան սկիզբն երկինք
ամպամած լինելով Դիւանը կարող չէր ե-
ղած գուշակել թէ ուրբաթ օր պայծառ
թէ անձրեւոտ օր մը պիտի լինի. հետեւա-
բար խոհեմութիւնը կը պահանջէր, պա-
տասխանատուութեան ներքեւ չմտալու հա-
մար, Ժողովոյ գումարման հրաւերները չու-
ղարկել :

—Ուստի զլեւան Տ. Գեորգ վարդապետ
գրաւոր հաղորդած է առ Ս. Պատրիարքն
իւր հրաժարականը Կեսարիոյ առաջնոր-
դութեան պաշտօնէն :

—Վանէն կը գրեն Արեւելի թէ՛ Մար-
տիրոս Աճեմեան անուն երիտասարդ մը որ
երբեմն ի Թիֆլիզ Մշակ լրագրի ցրուիչն ե-
ղած էր, այժմ հրաման ընդունած է թու-
ղու Վանն եւ մեկնիլ ի Կ. Պոլիս : Մարտ
18ին ճամբայ ելած է ընդ հսկողութեամբ :

Աճեմեան էջ. մի քանի օր առաջ ութ
օր բանտարկութեան եւ 150 դահեկան
տուգանքի դատապարտուած էր տեղական
գաւառական կողմանէ, ամբաստանուած լի-
նելով թէ փառասիրտ դատուած գրքեր կը
ներմուծէ ի Թուրքիա : Ոստիկանութիւնը
խուզարկութիւն ընելով նորա տան մէջ,
գտած էր հրացան մը եւ քանի մը գրքեր :
Նախորդ կուսակալը թուի թէ այդ երի-
տասարդի մասին աննպատակ տեղեկութիւն-
ներ հաղորդած էր ի Կ. Պոլիս Կեզր. իշխա-
նութեան :

—Անտոն Ալիք էֆէնտի, որ արդէն ծա-
նօթ է լրագրական հրապարակին վրայ,
օգտակար հրատարակութեան մը ձեռնար-
կած է : Ալիք էֆէնտի ստանձնած է խմբ-
րագրապետութիւնն ԿԱԶԷԴ Էթեմէ-
հանէն անուն շաբաթաթերթի մը, որ,
ինչպէս անունէն կ'երեւի, կը պարու-
նակէ տնտեսական, երկրական եւ այլ այս
կարգի յօդուածներ ու տեղեկութիւններ որք
առնչութիւն ունին երկրին նիւթական
զարգացման հետ : ԿԱԶԷԴի առաջին երկու
թիւերն հրատարակուեցան արդէն ընտիր
պարունակութեամբ : Յարատեւութիւնը և
յաջողութիւնը կը մաղթենք այս օգտակար
ձեռնարկին :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Բերայի հայ իգական սեռի արուեստանոցի բացումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 4 երկուշաբթի օր :

Արդէն երեսուն և վեց աշակերտուհիք արձանագրուած են սոյն արուեստանոցը մտնելու համար : Եւ որովհետեւ առայժմ ընդունելի աշակերտուհեաց թիւն ութսունը չպիտի անցնի , քառասուն և չորս տեղ բաց կը գտնուի :

Ուստի այն աղջայիքը որք կը փափաքին աշակերտուհի արձանագրել տալ արուեստանոցին , կը հրաւիրուին ներկայացնել զանոնք մինչեւ ապրիլ 30 , որպէս զի ըստ կանոնադրոյ հարկ եղած քննութիւնը կատարուելով ընդունելութեան պայմաններն որոշուին :

Սոյն քննութիւն և արձանագրութիւն տեղի պիտի ունենան ամսոյս 19 կիրակի օրէն սկսեալ ամեն օր առաւօտեան ժամը 2 էն մինչեւ 6 ի խորհրդարան Բերայի Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ :

Ի Դիմաց Խնամակալութեան
Գանձապետ Ատենապետ
Գ. ԿԻՒՄԻՒՇԿԵՐՏԱՆ Օ. Կ. ՆՈՒՐԵԱՆ
Բերա , 16 ապրիլ 1887 :

ՆԵՐԿԱՐԱՐ

ԱՍՏՏՈՒՐ ԱԼԼԱՆԶԵՐՏԵԱՆ պատիւ ունի ծանուցանել արդոյ հասարակութեան թէ վերաբացած է իւր ներկարարի խանութն , ի Մահմետ փաշա , Թարաքճըլար , թիւ 95 , ուր ամեն տեսակ կերպասէ ըզդեստներու արապները կը հաւելին հետք բնաւ չթողլու կերպիւ , և կը ներկուին ու կը յարդարուին՝ նոր կերպասէ չտարբերելու աստիճան : Յաճախորդք գոհ պիտի մնան նաև գնոց չափաւորութենէն : 2—4

ԹԱԳՈՒՀԻՈՅՆ ՄԱՆԵԱԿԸ . — Աղեքսանդր Տիւմայի սոյն հետաքրքրաշարժ վէպը (Թարգմ. Բ. Մ. Պողոսեան) զոր կը հրատարակէ Յ. Քրիստափորեան էֆէնտի , կանոնաւորապէս իւրոյ կ'ընծայուի , յոյժ համեստ պայմաններով : Ա. ՀԱՏՈՐՆ հրատարակուեցաւ արդէն և կը վաճառի ի գին 12 դրուի . իսկ բաժանորդաց համար 10 դրուի : Միւս երեք հատորներն ալ կը հրատարակուին հետզհետէ : Ամբողջ գործը պիտի բազմանայ 4 հատորէ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ՄԻՀՐԱՆ ԱՔԻԿԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ԹՈՒՐԻՔԵՐԷՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Սոյն գիրքը՝ որ հեղինակին գործերէն թրքատաւ կիւլտէսթէին հայերէն արուստանութիւնն է , կը պարունակէ «էնէֆներ , իմնապէրներ , ժողովներ , բնաբաններ , արդարեւներ և այլ խիստ պիտանի գրուածներ . գին 5 1/2 դրուի :

ԼԷԴԱԻՅԻ ԱՍՏՐ
ՄԱՍ Ա. ԵՒ Բ.

Կը ստորունակէ պատմական , նկարագրական հատուածներ , փոքրիկ ոտանաւորներ , առակներ , ալ եւ այլ նամակներ , գին 60 փարա :

ԻՔՍԻՐԻ ԷԼԻՅԱՍԻ ՕՍՄԱՆԻ
ՏԷՊ Գ.

Խիստ գիւրտաց Բերական մ'է , որոյ կէտը տալադիր , իսկ միւս կէտը նորա ձեռագիրն է . գին 1 դահեկան :

Ծանօթ . Հեղինակին բոլոր գրքերուն զեղչըն հարկւրին 20 է :

ԽՐԱՏ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

Ամեն անոնք որ կ'ուզեն ձեռք բերել այս օտար զեղադործական մասնագիտութիւն , ներն զորս չեն կարող գտնել իրենց դեղաՎաճառին քով , կրնան զիմել Դեղադործական Մէքթանոն ի Կ. Պոլիս , Ղալաթիոյ մեծ փողոց , 35 : Առաքուել կը լինի փոստայով , նոյն իսկ մէկ սրուակի կամ տուփի համար , եթէ խնդրանքին հետ զրկուի փոխարժէքն և գեղին ճիշդ անունը : Պէտք է յատկապէս գրել սեղանին անունն եւ հասցէն :

Ամեն մարդու համար ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ գլխաւոր պայմանն է թող չտալ որ աղասը մնայ լեարդին վրայ : Արդ , Տ-իւր Հէ. Կոռէ Ա. Երէկեան հանրահաշիւ Դեղահարկերը մասնաւորապէս շինուած են լեարդը մաքրելու համար : Թէ՛ ակորժահամ են , և թէ՛ մէկ անգամի համար մէկ դեղահատ կը բաւէ : Իւրաքանչիւր շիշ կը պարունակէ 20 դեղահատ : Կը ծախուի գլխաւոր դեղատան մէջ : Ընդհանուր կեդրոնատեղին է Դեղաց գործական Մթերանոցն , Կալաթայի մեծ փողոց , 35 (կայարան թրամուէյից) : Գաւառները կը զրկուի առանց փոխադրութեան ծախքի , հանդերձ ծանօթութեամբ , և մեկնութեամբ , ի փոխարէն 10 դր. ի թղթատարական տոմսի :

ԿՐԹԱԿԱՆ—ԳՈՐԾ

Գրեց Ս. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Այս երկի մէջ մանուկը կը ներկայացուի շրջապատելուր կենսական շինք գըլխաւոր շրջանակներէն . — Տուն , Փողոց — Ընկերային շրջանակ , Եկեղեցի . Ուսումնարան և խնամատուն : Անդ ցուցուած են 1. մանուկին ճշմարիտ մարդ լինելու յայտնի բնածիր առանձնատկութիւնները , 2. նորա եկամուտ չար հակումները՝ ձեռք բերած շրջակայների յաւի վարչականութեան , և 3. մեր ձեռք առած ուղղութիւններն՝ համաձայն մանկավարժութեան՝ այդ մատաղ սերնդի կրթութեան նկատմամբ : Ուստի սոյն գործ կը յանձնարարուի աղջային կրթութեան գործի բարեկամ ամեն աղջայնոց :

Կը գտնուի ամեն հայ գրաւաճառաց քով ի գին 5 դր :

Սրտոնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՅԵԼԷ ԻՐԱԳՈՒՆ



ՄԼՏԵՄ Ս. Ա. ԱԼԼԵՆԻՆԻ

ԵՐԻՒՐ-ԷՆՕՒՆՕԹ ՄԼՁ. ԿՈՐՈՒՈՂ
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER)

Ներմակ ընկած մազերուն գոյն , վերնիճ ու գեղ կուտայ : Կը նորոգէ անոր կեանքը , ոյժը և աճումը : Գլխու թեփը շուտ մը աներևոյթ կ'ընէ : Իր անուշ հոտը առատ է ու հեշտալի :

“Մէկ շիշ կը բաւէ :” Եւ քիչ փորձը ունեցան ամենքը որոնցմոտ զուրկուած մազեր իրենց բնական գոյնին դարձան , և ճաղատ տեղերը մազով ծածկուեցան :

“Իերկ չէ , և ամենեւին զեան մը չընէ : Թէ՛ որ կ'ուզես թարմ մազ ունենալ և բոլոր կենացդ մէջ պահել , առանց ուշանալու շիշ մը ստացիր ԿԵԼԷՆԻ Ս. Ա. ԱԼԼԵՆԻ ՀԱՄԱՂ ԽԱՐԿԱՆ ԽԱՆ ԽԱՐԿԱՅԷՆ . (MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR RESTORER.)

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կրկնապատի ամեն սափրիչներու , անոյշ իւղազործներու և անգղիացի դեղագործներու քով :



ՀԱՐԱՆՆԵԿԸՆ ԴԵՂԱԿԵՓՈՒՆՔ

ԳԵՂԱՅԿԵՐՈՒՆՈՂ ՄԼՔՄՆՈՅ ԳՈՅՆԸ , ՄԻՇՏ ԴԵՂԱԿԵՓՈՒՐ , ՄԻՇՏ ԹԵՐՄ :

Ընդամուտն մը փորձը պիտի համոզէ ամեն Տիկին թէ որչափ գերազանց է այս ուրիշ ամեն հեղանիսթներէ և բազմաթիւ փոշիներէ : Ընտելն անգամ գործածելովն ալ , որ քանի մը վայրկեանի գործ է , պիտի անտուի իսկոյն որ երեսը , վիզը , թեւերը և ձեռքները պիտի առնուն անոյշ փափկութիւն մը և մարմարիտի փայլ : Հանդերձ շուշանի և վարդի գունոյ և բուրմամբ : Սապոնի գրգռիչ յատկութիւնները կը հանդարտեցունէ : Ընտել կ'ընէ մորթի սեւութը , երեսի և ձեռքի ցաները , արևայրութիւնը , և ուրիշ ամեն բրտութիւն և բծաւորութիւն : Եւ աս ամեն բանով անկաբիւր կ'ընէ մասնուրի թէ արհեստով գեղեցկացուած է :

Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք : Կրկնապատի սափրիչներու , անոյշ իւղագործներու և անգղիացի դեղագործներու քով :



ԿԵԱՆՔ , ԱՃՈՒՄՆ և ԳԵՂ ՄԱՋԵՐՈՒ :

ՄԷԼԻՐՈՂ

ՄԼՁԵՐՈՒ ՄԷԼԻ ՀԱՏԻԿ ԿՈՐՈՒՈՂ

Իրապէս իրենց առջի թարմ գոյնին կը դարձունէ ձերմրկած կամ գունաթափ մազերը . Կը զաղրեցունէ անոնց թափելը . Կը մաքրէ գլուխը , կը վերջացունէ թեփը , ու մազերուն նոր կեանք , աճումն , փայլ ու գեղեցկութիւն կուտայ : Կը վաճառուի երկու չափով՝ մեծ շիշերու մէջ : Գլխաւոր մթերանոցը Լոնտոն է (114 and 116, Southampton Row). Կոյնպէս Բարիզ ու Նիու Եօրք :

Կը գտնուի . Ն և Ժ . Գանդիւք եղբարց բրիտանական դեղարանը , բերա , Մեծ փողոց . Էտմընտ Գարուանա , Անգլիական մթերանոց , Եիւքսէք Գալարըրմ . և Իօ զիտօր Լագանտէլա 455 , բերա Մեծ փողոց :